ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ՅԵՎ
ՄԵԽԱՆԻԶԱՑԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ագրոտեխնիկական խորհուրդներ № 3

# ՍԽՏԶ-ՆԱՏԻ ՏՐԱԿՏՈՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հաստատված է ԽՍՀՄ Հողժողկոմատի և ԽՍՀՄ Խորհ-
տնտժողկոմատի կողմից ապրիլի 1-ին 1939 թ.

629.113
Ս-11

ՅԵՐԵՎԱՆ 1940

04 AUG 2010

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ՅԵՎ
ՄԵԽԱՆԻԶԱՑԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

629.113
Ս-11
Ագ.

Ագրոտեխնիկական խորհուրդներ № 3

# ՍԽՏԶ-ՆԱՏԻ ՏՐԱԿՏՈՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հաստատված է ԽՍՀՄ Հողժողկոմատի յեվ ԽՍՀՄ Խորհ-տնտժողկոմատի կողմից ապրիլի 1-ին 1939 թ.

ՅԵՐԵՎԱՆ 1940

13 1'JUL 2013

642
40

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 1

Անց է կացվում ամեն օր առաջին հերթափոխի աշխատանքն սկսելուց առաջ:

1. Զննել և ընդունել տրակտորը, ստուգել գործիքները: Տրակտորը լցնել վառելանյութով, ջրով և լրացնել ռադիատորի ջուրը: Մաքրել բակերի խցանների անցքերը:

Կատարողներ: *Մեխանիկ կամ տրակտորային բրիգադիր, տրակտորիստ, զապրավշչիկ:*

2. Շարժիչի պատենատուփից դուրս թափել յուղը մինչև ստուգիչ ծորակը և լրացնել թարմ յուղ: Ստուգել և անհրաժեշտության դեպքում փոխել օդազտիչի յուղը: Յուղել տրակտորը համաձայն հրահանգի:

Կատարողներ. *Տրակտորիստ, զապրավշչիկ:*

3. Ստուգել, յուղել և կարգավորել կցորդ մեքենաներն ու կցանքը (պրիցեպկան):

Կատարողներ. *Մեխանիկ կամ բրիգադավար, պրիցեպշչիկ:*

4. Գործարկել շարժիչը, տաքացնել ու լսել: Ստուգել յուղի մանոմետրի ցուցմունքը:

Կատարողներ. *Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ, տրակտորիստ:*

## *ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ*

1. Ստուգել և անհրաժեշտության դեպքում լրացնել ռադիատորի ջուրը: Ստուգել շարժիչի պատենատուփի յուղի մակարդակը: Ստուգել տրակտորի և կցվող մեքենաների վիճակը:

Կատարողներ. *Տրակտորիստ, պրիցեպշչիկ:*

2. Ստուգել շարժիչի աշխատանքն ու ագրեգատի վիճակն ակոսում (չկանգնեցնելով տրակտորը):

Կատարողներ. *Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ։*

№ 1-ին տեխնիկական խնամքի կատարման որինակելի ժամանակը—1 ժամ:

*Մինչև աշխատանքի սկիզբը . . . —50 րոպե.*

*Աշխատանքի ժամանակ . . . —10 »*

Ժամանակի ծախսումն ըստ կատարողների՝

| | |
|---|---|
| *Մեխանիկը կամ տրակտորային բրիգադավարը (մինչև աշխատանքի սկիզբը* | 15 րոպե |
| *Աշխատանքի ժամանակ* | 10 » |
| *Տրակտորիստը մինչև աշխատանքի սկիզբը* | 50 » |
| *Աշխատանքի ժամանակ* | 10 » |
| *Պրիցեպշչիկը մինչև աշխատանքի սկիզբը* | 30 » |
| *Աշխատանքի ժամանակ* | 10 » |
| *Զապրավշչիկը մինչև աշխատանքի սկիզբը* | 20 » |
| *Աշխատանքի ժամանակ* | — |

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 2

*Անց է կացվում ամեն որ առաջին և յերկրորդ հերթափոխի միջև յեղած ընդմիջմանը, յերկրորդ հերթափոխի աշխատանքի ընթացքում և աշխատանքը վերջացնելուց հետո։*

### *ՄԻՆՉԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԿԻԶԲԸ*

*1. Զննել ու լսել տրակտորը։ Տեղեկացնել մեխանիկին կամ տրակտորային բրիգադավարին տրակտորի և կցվող մեքենաների վիճակի մասին։ Հանձնել ապրեղատը յերկրորդ հերթափոխի տրակտորիստին։ Ստուգել գործիքները։*

Կատարողներ. *Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ, առաջին և յերկրորդ հերթափոխի տրակտորիստներ։*

*2. Մաքրել տրակտորը կեղտից ու փոշուց։*

Կատարողներ. *Առաջին հերթափոխի տրակտորիստ։*

*3. Բաքերը լցնել կերոսինով, բենզինով, ջրով ու մաքրել խցանների անցքերը։ Լրացնել ռադիատորի ջուրը։*

Կատարողներ. *Առաջի հերթափոխի տրակտորիստ, զապրավշչիկ։*

*4. Զննել թրթուրաշղթայի շպորների վիճակը։ Ստուգել ոդափոխիչի փոկի ձգվածությունը։*



Կատարողներ. *Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ, առաջին և յերկրորդ հերթափոխի տրակտորիստներ։*

*5. Ստուգել և անհրաժեշտության դեպքում փոխել շարժիչի պատենատուփի և օդազտիչի յուղը։ Կողային ֆրիկցիոնների միջից դուրս թողնել կուտակված յուղը։ Ստուգել կողային փոխանցումների յուղի մակարդակը։ Յուղել տրակտորը համաձայն հրահանգի։*

Կատարողներ. *Առաջին և յերկրորդ հերթափոխի տրակտորիստներ, զապրավշչիկ։*

*6. Զննել և լվանալ վառելանյութի ու ջրի զտիչներն (ֆիլտրներ) ու ծակոտիները (ստոյչիկ)։ Ստուգել վառելիքատար խողովակների միացությունները։*

Կատարողներ. *Յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։*

*7. Ստուգել, յուղել և կարգավորել կցվող մեքենաներն ու կցանը (սցեպկա)։*

Կատարողներ. *Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ, պրիցեպշչիկ։*

*8. Շարժիչը գործարկել, տաքացնել ու լսել։ Ստուգել յուղի մանոմետրի ցուցմունքը։*

Կատարողներ. *Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։*

### *ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ*

*1. Ստուգել և անհրաժեշտության դեպքում լրացնել ռադիատորի ջուրը։ Ստուգել պատենատուփի յուղի մակարդակը։ Ստուգել տրակտորի և կցվող մեքենաների վիճակը։*

Կատարողներ. *Յերկրորդ հերթափոխի տրակտորիստ, պրիցեպշչիկ։*

*2. Ստուգել շարժիչի աշխատանքն ու ագրեգատի վիճակն ակոսի մեջ։*

Կատարողներ. *Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ։*

### *ԱՇԽԱՏԱՆՔԸ ՎԵՐՋԱՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ*

*1. Մաքրել տրակտորը կեղտից ու փոշուց։ Տրակտորիստը տեղեկացնում է տրակտորային բրիգադավարին կամ մեխանիկին ագրեգատների վիճակի մասին։*

Կատարողներ. *Յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։*

№ 2 տեխնիկական խնամքի անցկացման որինակելի ժամանակը—1 ժամ 25 րոպե:

| | | |
|---|---|---|
| Հերթափոխման ընդմիջումների ժամանակ | — | 60 րոպե |
| Տրակտորի աշխատանքի ժամանակ | — | 10 » |
| Աշխատանքը վերջացնելուց հետո | — | 15 » |

Ժամանակի ծախսումն ըստ կատարողների՝

Մեխանիկը կամ տրակտորային բրիգադավարը՝
մինչև աշխատանքի սկիզբը—20 րոպե,
աշխատանքի ժամանակ—10 րոպե,
աշխատանքից հետո—5 րոպե:

Առաջին հերթափոխի տրակտորիստը, մինչև աշխատանքի սկիզբը—45 րոպե:

Երկրորդ հերթափոխի տրակտորիստը, մինչև աշխատանքի սկիզբը—60 րոպե, աշխատանքի ժամանկ—10 րոպե, աշխատանքից հետո—15 րոպե:

Պրիցեպչիկը, մինչև աշխատանքի սկիզբը—40 րոպե, աշխատանքի ժամանակ—10 րոպե, աշխատանքից հետո—15 րոպե:

Զապրավչչիկը, մինչև աշխատանքի սկիզբը—30 րոպե, աշխատանքի ժամանակ—10 րոպե:

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 3

Անց է կացվում տրակտորը յուրաքանչյուր 35 հեկտար պայմանական վար կատարելուց հետ (40—50 ժամ) միջհերթափոխային ընդմիջման ժամանակ:

1. Ակոսից դուրս գալիս լսել տրակտորը: Մաքրել տրակտորը և լրացնել ջրի ու վառելանյութի պակասը: Մաքրել բակերի թցանների անցքերը: Տեղեկացնել մեխանիկին կամ տրակտորային բրիգադավարին տրակտորի ու կցվող մեքենաների վիճակի մասին: Ստուգել գործիքները, հանձնել ագրեգատը երկրորդ հերթափոխի տրակտորիստին:

Կատարողներ. Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ, առաջին և երկրորդ հերթափոխի տրակտորիստներ, զապրավչչիկ:

2. Բաց թողնել յուղը շարժիչի պատնատուփից (կատարել շարժիչը կանգնեցնելուց անմիջապես հետո):



Կատարողներ. Երկրորդ հերթափոխի տրակտորիստ:

3. Լվանալ ու մաքրել յուղի ֆիլտրները: Լցնել շարժիչի պատնատուփը թարմ յուղ: Փոխել ուղղորդիչի յուղը: Յուղել տրակտորը համաձայն հրահանգի: Ստուգել արագություն, կոնավոր փոխանցման և վերջին զույգ փոխանցման տուփերի յուղի մակարդակը:

Կատարողներ. Առաջին և յերկրորդ հերթափոխի տրակտորիստներ, զապրավչչիկ:

4. Լվանալ յերկու ֆիլտր-տականները և կերոսինի բակի լցանցքի ֆիլտրը: Ստուգել վառելիքատար խողովակները: Ստուգել ռադիատորի ջրի մակարդակը: Ստուգել գործարկող բռնակի մեխանիզմի սարք լինելը:

Կատարողներ. Յերկրորդ հերթափոխի տրակտորիստ, տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ:

5. Ստուգել փականների բացվածքների կարգավորումը, № 3 խնամքը մեկընդմեջ կատարելուց հետո, այսինքն՝ 70 հեկտար պայմանական վարից հետո (80—100 ժամ):

Կատարողներ. Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ:

6. Ստուգել ջրի պոմպի սալնիկի խտությունը և օդափոխիչի փոկի ձգվածությունը: Ստուգել օդի խողովակի շլանգային միացությունը յուղի ռադիատորի հետ և յուղի ռադիատորը կարբյուրատորի հետ:

Կատարողներ. Յերկրորդ հերթափոխի տրակտորիստ:

7. Զննել արտաքին ամրվածքները և ստուգել.

ա) թրթրաշղթայի մատերի շպլինտների վիճակը.

բ) թրթրաշղթայի ձգվածությունը.

գ) մագնետոյի ամրացման հեղյուսները.

դ) տրակտորի արտաքին դետալների ամրվածքների հեղյուսները:

Կատարողներ. Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ:

8. Դուրս պտուտակել կողային ֆրիկցիոնների բաժանմունքի յերկու հեղյուսները և մեկական հեղյուս ֆիկսատորից ու դուրս թողնել նրանցում կուտակված յուղը:

Կատարողներ. Առաջին հերթափոխի տրակտորիստ:

9. Ստուգել իջուցիկ խցանների հագեցվածքները (ռադիատորի,

փականցման տուփի, կոնաձև ատամնանիվների բաժանմունքի, ղեկային փոխանցումների) և բլոկի վրայի իջուցիկ ծածկը։

Կատարողներ. Առաջին հերթափոխի տրակտորիստ։

10. Ստուգել, յուղել և կարգավորել կցվող մեքենաներն ու կցորդիչը։

Կատարողներ. Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ, տրակտորիստ, պրիցեպշչիկ։

11. Շարժիչը գործարկել, տաքացնել ու լսել։

Ստուգել յուղի մանոմետրի ցուցմունքը։ Ստուգել կողային ֆրիկցիոնների, արգելակների կարգավորումը, ղեկավարման լծակների գործումը։

Կատարողներ. Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Տեխնիկական խնամքի գործողությունները աշխատանքի ժամանակ և հերթափոխի աշխատանքից հետո կատարել № 2 տեխնիկական խնամքին համապատասխան։

№ 3 տեխնիկական խնամքի անցկացման օրինակելի ժամանակը—2 ժամ։

Ժամանակի ծախսումն ըստ կատարողների (հերթափոխությունների ընդմիջման միջև).

| | |
|---|---|
| Տրակտորային բրիգադավարը կամ մեխանիկը. | 50 րոպե |
| Առաջին հերթափոխի տրակտորիստը . . | 85 » |
| Յերկրորդ հերթափոխի տրակտորիստը . . | 120 » |
| Պրիցեպշչիկը . . . . . . . | 85 » |
| Զապրավշչիկը . . . . . . . | 30 » |

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 4

Անց է կացվում տրակտորի 140 հեկտար պայմանական վար կատարելուց հետո (160—200 ժամ)։

1. Լվալ տրակտորը ակոսից դուրս գալիս։ Լրացնել տրակտորի վառելանյութն ու ջուրը և մաքրել բակերի խցանների անցքերը։ Տեղեկացնել տրակտորային բրիգադավարին կամ մեխանիկին տրակտորի և կցվող մեքենաների վիճակի մասին։ Ստուգել գործիքները։ Հանձնել ագրեգատը յերկրորդ հերթափոխի տրակտորիստին։

Կատարողներ. Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ, առաջին և յերկրորդ հերթափոխի տրակտորիստներ, պրիցեպշչիկ, զապրավշչիկ։

2. Բաց թողնել շարժիչի պատյանատուփի յուղը (շարժիչը կանգնեցնելուց անմիջապես հետո)։ Մաքրել տրակտորը կեղտից ու փոշուց, հանել պատյանատուփն ու յուղի պոմպը։ Զննել ծնկաձև լիսեռի առանցքակալները։ Պատյանատուփի ու յուղի պոմպի ցանցը լվանալ կերոսինով։ Զննել պոմպը և տեղակայել իր տեղը։ Ամրացնել պատյանատուփն իր տեղը։

Կատարողներ. Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։

3. Լվանալ ու մաքրել յուղի ֆիլտրները։ Շարժիչի պատյանատուփը լցնել թարմ յուղ։ Փոխել օդազտիչի յուղը։ Տրակտորը յուղել համաձայն հրահանգի։

Կատարողներ. Առաջին և յերկրորդ հերթափոխի տրակտորիստներ, զապրավշչիկ։

4. Լվանալ յերկու տակառները և կերոսինի բակի ցանցքի ֆիլտրը։ Ստուգել վառելիքատար խողովակները։ Լրացնել ռադիատորի ջուրը։ Ստուգել գործարկող բռնակի մեխանիզմի սարք լինելը։

Կատարողներ. Յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։

5. Կարգավորել փականների բացակը (նախապես հանել կապոտը և փականների գլխիկը։ Լվանալ փնջիկը (սապունը)։

Կատարողներ. Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ, առաջին և յերկրորդ հերթափոխի տրակտորիստներ։

6. Ներծծման կոլլեկտորի մեջ ջուր մտնող փոշխայնողները մաքրել կաթսաքարից։

Կատարողներ. Առաջին հերթափոխի տրակտորիստ։

7. Զննել մագնետոն և ստուգել բացակն ընդհատիչի կոնտակտների միջև։ Լվանալ կայծառնները, մաքրել այրուքից և ստուգել բացակը։ Զննել դինամոն։ Ստուգել ելեկտրալարերը, նրանց միացման ամրությունը և մեկուսացուցչի վիճակը։

Կատարողներ։ Տրակտորային բրիգադավար, մեխանիկ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։

8. Ստուգել ջրի պոմպի սալնիկի խտությունը, օդափոխիչի

փոկի ձգվածությունը։ Ստուգել շլանգային միացությունները, օդի խողովակի յուղի ռադիատորի հետ և յուղի ռադիատորը կարբյուրատորի հետ։

Կատարողներ. Առաջին հերթափոխի տրակտորիստ։

9. Զննել և ստուգել բոլոր արտաքին ամրվածքները. ա) մագնետոն, բ) կարբյուրատորը և բաքի ողակապերը, գ) ներարկման և արտարկման խողովակները, դ) կատոկները, ե) փոխանցման տուփը՝ շրջանակի (ռամայի) լոնժի հեծանին, զ) թրթրաշղթայի մատերի շպլինտների վիճակը։

Կատարողներ. Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ, առաջին հերթափոխի տրակտորիստ։

10. Ստուգել սայլակային կատոկների և պահպանող օղակների լյուֆտը և անհրաժեշտության դեպքում կարգավորել։

Կատարողներ. Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ, տրակտորիստ։

11. Ստուգել թրթրաշղթաների ձգվածությունը։ Մաքրել ու յուղել թրթուրների ուղղորդիչ անիվների ձգող հեղյուսները։

Կատարողներ. Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։

12. Ստուգել փոխանցման տուփի, կոնավոր բաժանմունքի և կողային փոխանցումների յուղի մակարդակը։ Ստուգել խցուցիկ խցանների (ռադիատորի, փոխանցման տուփի, կոնավոր փոխանցման բաժանմունքի, կողային փոխանցման) և բլոկի վրայի խցուցիկ ծորակի հագեցվածքները։

Կատարող. Առաջին հերթափոխի տրակտորիստ։

13. Դուրս պտուտակել կողային ֆրիկցիոնների բաժանմունքի խցանները և մեկական հեղյուս ֆիկսատորից և դուրս թողնել նրանցում կուտակված յուղը։

Կատարող. Առաջին հերթափոխի տրակտորիստ։

14. Մաքրել ծխնիաձև միացությունները կեղտից և ստուգել նրանց վիճակը։ Ստուգել ղեկավարման լծակների գործումը։

Կատարողներ. Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։

15. Ստուգել կարգավորիչը ու ակսելերատորի քարշային սիստեմը։

Կատարողներ. Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ։



16. Ստուգել, յուղել և կարգավորել կցվող մեքենաներն ու կցորդիչը (սցեպկա).

Կատարողներ. Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ, տրակտորիստ, պրիցեպշչիկ։

17. Գործարկել շարժիչը, տաքացնել ու լսել։ Ստուգել յուղի մանոմետրի ցուցմունքը։ Ստուգել ելեկտրոլուսավորությունը։ Ստուգել և կարգավորել կողային ֆրիկցիոնները, արգելակները։

Կատարողներ. Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Տեխնիկական խնամքի գործողությունները աշխատանքի ժամանակ և հերթափոխի աշխատանքից հետո, կատարել № 2 տեխնիկական խնամքին համապատասխան և լրացուցիչ կատարել հետևյալը։

1. Ստուգել և անհրաժեշտության դեպքում կարգավորել գլխավոր միացքը։

2. Ստուգել և կարգավորել կարբյուրատորը։

3. Ստուգել տերմոստատի աշխատանքը (ռադիատորի ջրի ջերմությամբ)։

№ 4 տեխնիկական խնամքի անցկացման օրինակելի ժամանակը—4 ժամ

Ժամանակի ծախսումն ըստ կատարողների.

| | | |
|---|---|---|
| Տրակտորային բրիգադավարը կամ մեխանիկը | 120 | րոպե |
| Առաջին հերթափոխի տրակտորիստը | 240 | » |
| Յերկրորդ հերթափոխի տրակտորիստը | 240 | » |
| Պրիցեպշչիկը | 240 | » |
| Զապրավշչիկը | 40 | » |

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 5

Անց է կացում փակ շենքում, տրակտորով 420 հեկտար պայմանական վար կատարելուց հետո (500—600 ժամ)։

1. Ակոսից դուրս գալիս լսել տրակտորը: Տրակտորիստը տեղեկացնում է մեխանիկին կամ տրակտորային բրիգադավարին տրակտորի և կցվող մեքենաների մասին: Ստուգել գործիքները:

Կատարողներ. Տրակտորային բրիգադավար կամ մեխանիկ, առաջին և երկրորդ հերթափոխի տրակտորիստներ, պրիցեպշչիկ:

2. Բաց թողնել շարժիչի պատենատուփի յուղը (շարժիչը կանգնեցնելուց անմիջապես հետո): Մաքրել տրակտորը կեղտից ու փոշուց. բաց թողնել բաքերի վառելանյութն ու ջուրը: Բաց թողնել ռադիատորի ջուրը:

Կատարողներ. Երկրորդ հերթափոխի տրակտորիստ:

3. Քանդել շարժիչը. հանել կապոտը, թուլացնել ռեզինե շլանգի խամութիկը, հանել կարբյուրատորը, մագնետոն և դինամոն: Հանել ներարկման կոլեկտորը (խողովակները), գլխադրի (կալպակ) կափարիչը և գլանների գլխիկի գլխադիրը, լիսեռը լծակների հետ միասին, գլանների գլխիկը: Հանել պատենատուփն ու յուղի պոմպը: Հանել մխոցները շարժանակների հետ միասին:

Կատարողներ. Մխանիկ, նորոգման փականագործ, առաջին և երկրորդ հերթափոխի տրակտորիստներ:

4. Քանդել գլանների գլխիկն ու փականները և մաքրել այրուքից ու լվանալ:

Կատարողներ. Նորոգման փականագործ, առաջին հերթափոխի տրակտորիստ:

5. Հղկել փականները (պրիտիրկա անել):

Կատարողներ. Մեխանիկ, առաջին հերթափոխի տրակտորիստ:

6. Հավաքել գլանների գլխիկը:

Կատարողներ. Նորոգման փականագործ, առաջին հերթափոխի տրակտորիստ:

7. Փոխել վերեվի կոմպրեսիոն ու յուղման օղակները: Ստուգել մյուս օղակները: Ստուգել մխոցային մատերն ու վռանները (վտուլկաները):

Կատարողներ. Մեխանիկ, առաջին հերթափոխի տրակտորիստ:



8. Ստուգել արմատական առանցքակալները (առանց քանդելու): Ստուգել բաբբիտի սատյարաններն ու շարժանակային առանցքակալների յուղի անցքերի վիճակը: Մխոցները շարժանակների հետ միասին հագցնել իր տեղը: Ձգել շարժանակային առանցքակալները:

Կատարողներ. Մեխանիկ, երկրորդ հերթափոխի տրակտորիստ:

9. Կերոսինով լվանալ պատենատուփն ու յուղի պոմպի ցանցը: Մաքրել ու լվանալ յուղի ֆիլտրները: Քանդել ու լվանալ օդազտիչը: Լվանալ փնչիչը (սապունը):

Կատարող. Երկրորդ հերթափոխի տրակտորիստ:

10. Մաքրել յերկու տակառները և կերոսինի բաքի լցանցքի ֆիլտրը: Մաքրել այրուքից ներարկման կոլեկտորի մեջ ջուր մատուցող փոշիացնողը: Ստուգել և կարգավորել տերմոստատը: Ստուգել գործարկման բանակի մեխանիզմի սարք լինելը:

Կատարողներ. Առաջին հերթափոխի տրակտորիստ:

11. Հավաքել շարժիչը: Հավաքելիս փոխել անպետք միջադիրները:

Կատարողներ. Մեխանիկ, առաջին և երկրորդ հերթափոխի տրակտորիստներ:

12. Կարգավորել փականների բացակը:

Կատարող. Մեխանիկ:

13. Շարժիչի պատենատուփը յուղ լցնել, ռադիատորը լցնել ջուր: Լցնել տրակտորը վառելանյութով ու ջրով և մաքրել բաքերի խցանների անցքերը:

Կատարողներ. Երկրորդ հերթափոխի տրակտորիստ, պրիցեպշչիկ:

24. Զննել մագնետոն, ստուգել ընդհատիչի կոնտակտների միջև բացակը և մաքրել բաշխիչի սկավառակը: Տեղակայել մագնետոն: Կայծառները լվանալ ու մաքրել այրուքից և ստուգել բացակը: Ստուգել խոզանակների քովերը դինամոյի կոլեկտորին, մաքրել կոլեկտորն ու խոզանակները: Տեղակայել դինամոն և ստուգել էլեկտրալարերը:

Կատարողներ. Մեխանիկ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։

15. Ստուգել ջրի պոմպի սալնիկի խտությունը և օդափոխիչի փոկի ձգվածությունը։ Լվանալ և տեղակայել կարբուրատորը։ Ստուգել օդի խողովակի շլանգային միացությունը ջրի ռադիատորի հետ և յուղի ռադիատորը կարբուրատորի հետ։

Կատարողներ. Նորոգման փականագործ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։

16. Ստուգել կարդանային լիսեռի ծխնին։

Կատարողներ. Մեխանիկ։

17. Ստուգել և ձգել տրակտորի բոլոր արտաքին ամրվածքները։

Կատարողներ. Նորոգման փականագործ, առաջին հերթափոխի տրակտորիստ։

18. Ստուգել և կարգավորել սայլակների հենակային կատոկների առանցքի ուղղության լյուֆտը։ Ստուգել և կարգավորել պահպանող ռոլիկները։

Կատարողներ. Մեխանիկ, նորոգման փականագործ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։

19. Ստուգել թրթրաշղթայի մատերի շպլինտավորումը, ստուգել թրթրաշղթաների ձգվածությունը։ Մաքրել և յուղել ուղղորդիչ անիվների ձգող հեղյուսները։

Կատարող. Յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։

20. Յուղել տրակտորը հրահանգի համաձայն։

Կատարող. Յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։

21. Ստուգել փոխանցման տուփի, կոնավոր ատամնանիվների և կողային փոխանցման բաժանմունքների յուղի մակարդակը։ Անհրաժեշտության դեպքում լրացնել յուղը, ստուգել իջուցիկ խցանների (ռադիատորի, փոխանցման տուփի, կոնավոր ատամնանիվների բաժանմունքի և կողային փոխանցումների) և բլոկի վրայի իջուցիկ ծորակի ձգվածությունները։ Զննել ու վերացնել յուղի ծորը կորպուսների և կափարիչների միացման տեղերից։

Կատարողներ. Մեխանիկ, նորոգման փականագործ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։



22. Դուրս պտուտակել կողային ֆրիկցիոնների յերկու խցանը և ֆիլտրատորից մեկական հեղյուս ու դուրս թողնել նրանցում կուտակված յուղը։

Կատարողներ. Առաջին հերթափոխի տրակտորիստ։

23. Մաքրել կեղտից ձգանի ծխնիաձև միացվածքները և ստուգել նրանց վիճակը։ Ստուգել ղեկավարման լծակների գործումը։

Կատարողներ. Յերկրորդ հերթափոխի տրակտորիստ, մեխանիկ։

24. Ստուգել տրակտորի տեխնիկական խնամքի կատարումը։ Ստուգել կցվող մեքենաների վիճակը։

Կատարողներ. Մեխանիկ կամ տրակտորային բրիգադավար։

25. Գործարկել, տաքացնել և լսել շարժիչը։ Ստուգել յուղի մանոմետրի ցուցմունքը։ Ստուգել կարգավորիչի գործումը։ Ստուգել և կարգավորել միացքն ու կողային ֆրիկցիոնները։ Ստուգել էլեկտրոլուսավորումը։

Կատարողներ. Մեխանիկ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Տեխնիկական խնամքի գործողությունները աշխատանքի ժամանակ և հերթափոխի աշխատանքից հետո, կատարել № 2 տեխնիկական խնամքին համապատասխան և լրացուցիչ՝

1. Ստուգել և անհրաժեշտության դեպքում կարգավորել գլխավոր միացքը։
2. Ստուգել և կարգավորել կարբուրատորը։
3. Ստուգել կողային ֆրիկցիոնների աշխատանքը։
4. Ստուգել տերմոստատի աշխատանքը (ռադիատորի ջրի ջերմության միջոցով)։

№ 5 տեխնիկական խնամքի անցկացման օրինակելի ժամանակը—10 ժամ.

Աշխատանքի ժամանակ և յերկրորդ հերթափոխի ավարտումից հետո —30 րոպե։

Ժամանակի ծախսումը ըստ կատարողների՝

Մեխանիկը . . . . . . . . 500 րոպե

| | | |
|---|---|---|
| Նորոգման փականագործը . . . . . . | 480 | րոպե |
| Առաջին հերթափոխի տրակտորիստը . . . | 600 | » |
| Երկրորդ հերթափոխի տրակտորիստը . . | 600 | » |
| Պրիցեպշչիկը . . . . . . . | 40 | » |
| Զապրավշչիկը . . . . . . . | 45 | » |

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 6

*Անց է կացվում 700 հեկտար պայմանական վար կատարելուց հետո (800—900 ժամ)։*

*1. Սառեցման սիստեմից հեռացնել կաթսաքարը (նակիպ) (կատարել նախքան տրակտորի զննելը) (տես հրահանգային ցուցումները)։*

*2. Դուրս թողնել յուղը և լվանալ տուփերը՝ արագության, կոնավոր ատամնանիվների և վերջին զույգ փոխանցումների։ Լվանալ ղեկավարման մուֆթակը (տես հրահանգային ցուցումները)։*

Կատարողներ. *Մեխանիկ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։*

*3. Բաց թողնել շարժիչի պատնյատուփի յուղը։ Տրակտորը խնամքով մաքրել ու լվանալ կեղտից, փոշուց, յուղից և դուրս թողնել բակերի ջուրն ու վառելանյութը։ Բաց թողնել ռադիատորի ջուրը։*

Կատարողներ. *Առաջին և յերկրորդ հերթափոխի տրակտորիստներ։*

*4. Նախապատրաստել գործիքները, պահեստային մասերը և նյութեր։*

Կատարողներ. *Նորոգման փականագործ։*

*5. Քանդել շարժիչը. հանել կապոտը, կարբյուրատորը, մագնետոն, դինամոն, ներարկման, արտարկման կոլեկտորը, ռադիատորը, օդափոխիչը, օդապտիչը, բաշխիչ ատամնանիվների կափարիչը, վառելանյութի բակերը, գլանների գլխիկը. մխոցները շարժանակների հետ միասին։ Անջատել թրթռաշղթան։*

Կատարողներ. *Մեխանիկ, նորոգման փականագործ, առաջին և յերկրորդ հերթափոխի տրակտորիստներ։*



*6. Հանել կարինկան, հետին կամուրջի և արագությունների տուփի կափարիչները։*

Կատարող. *Նորոգման փականագործ։*

*7. Քանդել և այրուքից մաքրել գլանների գլխիկն ու փականները, վռանները լվանալ և ստուգել։*

Կատարողներ. *Նորոգման փականագործ, առաջին հերթափոխի տրակտորիստ։*

*8. Զննել ծնկաձև լիսեռի շարժանակային վզիկների վիճակը և կատարել վզիկների մաշվածության չափումները։*

Կատարողներ. *Մեխանիկ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։*

*9. Խառատել փականների ֆակաները, ֆրեզ գցել փականբնիկները և հղկել փականները։*

Կատարողներ. *Մեխանիկ, նորոգման փականագործ, առաջին հերթափոխի տրակտորիստ։*

*10. Հավաքել գլանների գլխարկը։*

Կատարողներ. *Մեխանիկ, առաջին հերթափոխի տրակտորիստ։*

*11. Մխոցները քանդել ու մաքրել այրուքից։*

Կատարողներ. *Մեխանիկ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։*

*12. Փոխել բոլոր կոմպրեսսիոն և յուղիչ օղակները, անհրաժեշտության դեպքում նախապես խառատել մխոցի առվակները։ Ստուգել և անհրաժեշտության դեպքում փոխել մխոցային մատներն ու վռանները։*

Կատարողներ. *Մեխանիկ, նորոգման փականագործ։*

*13. Հավաքել մխոցն ու շարժանակը և տեղադրել։*

Կատարողներ. *Մեխանիկ, նորոգման փականագործ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։*

*14. Ստուգել բաբիտի վիճակը, նրա սառցարանները և յուղման անցքերը։ Զգել շարժանակային ու արմատական առանցքակալները (տես հր. ցուցումները)։*

Կատարողներ. *Մեխանիկ, նորոգման փականագործ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։*



ՀՍՍՀ-ССРА

15. Մաքրել ու լվանալ յուղի պոմպի ցանցը: Լվանալ և ստուգել յուղի պոմպը: Ստուգել մանոմետրը:

Կատարողներ. *Մեխանիկ, առաջին հերթափոխի տրակտորիստ:*

16. Լվանալ կերոսինով սապունը, յուղի ֆիլտրները և շարժիչի պատենատուփը, այնուհետև տեղակայել:

Կատարողներ. *Առաջին հերթափոխի տրակտորիստ:*

17. Լվանալ և մաքրել վառելիքատար խողովակները, ֆիլտրները և տակառները (ոտստոյնիկները): Լվանալ կարբուրատորը և կարգավորել լողանի առանձնարանի վառելանյութի մակարդակը: Մաքրել կաթսաքարից կոլեկտորի մեջ ջուր սրսկող փոշիացնողները:

Կատարողներ. *Մեխանիկ, տրակտորիստ:*

18. Ստուգել բաշխիչ լիսեռի ատամնանիվի ամրվածքը և «խաղը» առանցքի ուղղությամբ:

Կատարող. *Մեխանիկ:*

19. Բանդել, ստուգել և լվանալ գործարկման բռնակի մեխանիզմը:

Կատարողներ. *Մեխանիկ, նորոգման փականագործ:*

20. Բանդել, լվանալ և հավաքել ոգափոխիչը: Կարգավորել ջրի պոմպի սալնիկները:

Կատարողներ. *Մեխանիկ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ:*

21. Հավաքել շարժիչը:

Կատարողներ. *Մեխանիկ, նորոգման փականագործ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ:*

22. Կարգավորել փականները:

Կատարող. *Մեխանիկ:*

23. Զննել և մաքրել մագնետոն, ստուգել ընդհատիչի կոնտակտների բացակը, մաքրել բաշխիչի սկավառակը: Տեղակայել մագնետոն: Կոյծառները լվանալ, մաքրել այրուքից և ստուգել բացակները: Ստուգել ելեկտրոլարերը:

Կատարողներ. *Մեխանիկ, առաջին հերթափոխի տրակտորիստ:*

24. Դինամոն արհեստանոցում ամբողջապես մաքրել և ստուգել: Դինամոն տեղակայել:



Կատարող. *Մեխանիկ:*

25. Ստուգել կարգավորիչն ու ակսելերատորի ձգանային սիստեմը:

Կատարող. *Մեխանիկ:*

26. Ոգափոխիչը լվանալ (քանդված վիճակում), յուղ լցնել և դնել իր տեղը:

Կատարող. *Առաջին հերթափոխի տրակտորիստ:*

27. Լվանալ և տեղակայել վառելանյութի բակերը:

Կատարողներ. *Առաջին և յերկրորդ հերթափոխի տրակտորիստներ:*

28. Ստուգել կոնավոր փոխանցման բացակները: Ստուգել արագությունների տուփի ատամնանիվների վիճակը:

Կատարող. *Մեխանիկ:*

29. Ստուգել և անհրաժեշտության դեպքում վերահավաքել կողային փոխանցումների սալնիկները (տես նրան. ցուցումները):

Կատարողներ. *Մեխանիկ, նորոգման փականագործ:*

30. Ստուգել և կարգավորել միացքն ու արգելակները:

Կատարողներ. *Մեխանիկ, նորոգման փականագործ:*

31. Ստուգել և վերացնել կարդանային լիսեռի առանցքային «վաղքը» (բազբեգ) (տես նրան. ցուցումները:)

Կատարողներ. *Մեխանիկ, նորոգման փականագործ:*

32. Հետին կամրջակի և արագությունների տուփի կափարիչները դնել իր տեղը: Ամրացնել կաբինկան:

Կատարողներ. *Մեխանիկ, նորոգման փականագործ:*

33. Ստուգել ու կարգավորել առջևի և հետևի կախվածքի կատոկները և անհրաժեշտության դեպքում փոխել ռոլիկավոր առանցքակալները:

Կատարողներ. *Մեխանիկ, նորոգման փականագործ, առաջին հերթափոխի տրակտորիստ:*

34. Ստուգել և վերացնել հետևյալ առանցքային լյուֆտերը՝

ա) տանող անիվների (առաջանիվ).

բ) ուղղորդիչ անիվների.

գ) Թրթուրաշղթայի պահպանող ռոլիկների.

դ) ընդլայնակի հեծանի ցապֆաների վրայի սայլակների:

Կատարողներ. Մեխանիկ, նորոգման փականագործ։

35. Ստուգել ողակները, մատերը և բոլոր շպլինտները, փոխարինելով մաշվածները։ Հագցնել թրթրաշղթաները և կարգավորել նրա ձգվածությունը։

Կատարողներ. Նորոգման փականագործ, առաջին հերթափոխի տրակտորիստ։

36. Յուղ լցնել՝ շարժիչի պատենատուփը, արագությունների տուփը, կոնավոր ատամնանիվների բաժինը և վերջին զույգ փոխանցումների բաժինը։ Լցնել ջուր և վառելանյութ։ Տրակտորը յուղել համաձայն հրահանգի։ Ստուգել իջուցիկ խցանների ձգվածությունը։

Կատարողներ. Յերկրորդ հերթափոխի տրակտորիստ, պարավշչիկ։

37. Խնամքով ստուգել և ձգել տրակտորի բոլոր արտաքին միացությունները։

Կատարողներ. Նորոգման փականագործ, առաջին հերթափոխի տրակտորիստ։

38. Ստուգել տեխնիկական խնամքի գործողությունների կատարումը։

Կատարող. Մեխանիկ։

39. Գործարկել շարժիչը աշխատացնելու և լսելու համար։ Ստուգել տրակտորի գործիքների կոմպլեկտը։

Կատարողներ. Մեխանիկ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։

40. Կանգնեցնել շարժիչը, զննել տրակտորը, ստուգել սռնիկները և վերացնել նկատված դեֆեկտները։

Կատարողներ. Մեխանիկ, նորոգման փականագործ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։

41. Գործարկել շարժիչը, ստուգել շարժիչի պտույտները և կարգավորել կարգավորիչը. ստուգել մանոմետրի ցուցմունքը։

Կատարողներ. Մեխանիկ, յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։

42. Ստուգել և կարգավորել կողային ֆրիկցիոններն ու ղեկավարման արգելակները։ Ստուգել լծակների ու ղեկավարման պեդալների գործումը։

Կատարողներ. Մեխանիկ, նորոգման փականագործ։



№ 6 տեխնիկական խնամքի անցկացման օրինակելի ժամանակը—15 ժամ.

Ժամանակի ծախսումն ըստ կատարողների.

| | |
|---|---|
| Մեխանիկը . . . . . . . | 600 րոպե |
| Առաջին հերթափոխի տրակտորիստը . . . | 900 » |
| Յերկրորդ » » . . . . | 900 » |
| Նորոգման փականագործը . . . . . | 700 » |
| Զապրավշչիկը . . . . . . . | 60 » |

ՄԽՏԶ-ՆԱՏԻ տրակտորի տեխնիկական խնամքի կատարման պարբերականությունը.

| № № | Աշխատանքը (պայմանական վարի հեկտարներով) նոր տրակտորի շահագործման սկզբից կամ վերջին նորոգումից դուրս գալուց հետո | Տեխնիկակ. խնամքի №-ը | Ժամանակի ծախսը տեխնիկական խնամքի կատարման համար |
|---|---|---|---|
| 1 | Ամեն օր մինչև աշխատանքի սկիզբը և առաջին հերթափոխի աշխատանքի ժամանակ | 1* | 1 ժ. 00 ր. |
| 2 | Ամեն օր հերթափոխումների ընդմիջման ժամանակ, յերկրորդ հերթափոխի աշխատանքի ժամանակ և յերկրորդ հերթափոխի աշխատանքի վերջում. | 2* | 1 » 25 » |
| 3 | 35 հեկտ. պայմ. վար կատարելուց հետո | 3 | 2 » 00 » |
| 4 | 70 » » » | 3 | 2 » 00 » |
| 5 | 105 » » » | 3 | 2 » 00 » |
| 6 | 140 » » » | 3 | 2 » 00 » |
| 7 | 175 » » » | 4 | 4 » 00 » |
| 8 | 210 » » » | 3 | 2 » 00 » |
| 9 | 245 » » » | 3 | 2 » 00 » |
| 10 | 280 » » » | 4 | 4 » 00 » |
| 11 | 315 » » » | 3 | 2 » 00 » |
| 12 | 350 » » » | 3 | 2 » 00 » |
| 13 | 385 » » » | 3 | 2 » 00 » |
| 14 | 420 » » » | 5 | 10 » 00 » |
| 15 | 455 » » » | 3 | 2 » 00 » |
| 16 | 490 » » » | 3 | 2 » 00 » |
| 17 | 525 » » » | 3 | 2 » 00 » |
| 18 | 560 » » » | 4 | 4 » 00 » |
| 19 | 595 » » » | 3 | 2 » 00 » |
| 20 | 630 » » » | 3 | 2 » 00 » |
| 21 | 665 » » » | 3 | 2 » 00 » |
| 22 | 700 » » » | 6 | 15 » 00 » |
| 23 | 735 » » » | 3 | — |
| 24 | 770 » » » | 3 | — |
| 25 | 805 » » » | 3 | — |
| 26 | 840 » » » | 4 | — |



| № № | Աշխատանքը (պայմանական վարի հեկտարներով) նոր տրակտորի շահագործման սկզբից կամ վերջին նորոգումից դուրս գալուց հետո | Տեխնիկակ. խնամքի №-ը | Ժամանակի ծախսը տեխնիկական խնամքի կատարման համար |
|---|---|---|---|
| 27 | 875 հեկտ. պայմ. վար կատարելուց հետո | 3 | — |
| 28 | 910 » » » | 3 | — |
| 29 | 945 » » » | 3 | — |
| 30 | 980 » » » | 4 | — |
| 31 | 1015 » » » | 3 | — |
| 32 | 1050 » » » | 3 | — |
| 33 | 1085 » » » | 3 | — |
| 34 | 1120 » » » | 5 | — |
| 35 | 1155 » » » | 3 | — |
| 36 | 1190 » » » | 3 | — |
| 37 | 1225 » » » | 3 | — |
| 38 | 1260 » » » | 4 | — |
| 39 | 1295 » » » | 3 | — |
| 40 | 1330 » » » | 3 | — |
| 41 | 1365 » » » | 3 | — |
| 42 | 1400 » » » | Ընթացիկ նորոգում | |

*) № 1-ին և 2-րդ տեխնիկական խնամքը կատարվում են ամեն օր առաջին և յերկրորդ հերթափոխի կողմից, տրակտորի աշխատանքի ամբողջ ընթացքում:

Խմբագիր՝ ինժ.-մեխ. Ռ. ՑԱՂՈՒԲՅԱՆ
Թարգմանեց՝ ինժ.-մեխանիկ ԳԱՐԱԳԵՏՅԱՆ ՀԱՅԿ
Տեխ. խմբ. Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Գլավլիտի լիազոր՝ Ա—2659. Պատվեր 225, տիրաժ 1000
Հանձնված է արտադրության 19 հունիսի 1940 թ.
Ստորագրված է տպագրության 8 հուլիսի 1940 թ.

Մանկ. Ինստիտուտի տպարան, Մարքսի փ. 17, Երևան 1940

ՀՀ Ազգային գրադարան
NL0288068

14.478

# ВРЕМЕННЫЕ ПРАВИЛА ТЕХНИЧЕСКОГО УХОДА ЗА ТРАКТОРОМ СХТЗ-НАТИ

Изд. Управление агротехники и механизации
Наркомзема Арм. ССР Ереван 1940 г.